ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2019 թվականի թիվ 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԱԲԱԶՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքում ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության կողմից ըստ անհրաժեշտության ստուգման իրականացման արդյունքում արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ 23.07.2019թ. N13 ակտը

ո ր ո շ ու մ եմ

1. Նոյեմբերյան համայնքի վարչական տարածքում քաղաքացիներ Միշա Բուդաղյանի և համատեղ սեփականատեր Անահիտ Ասատրյանի, ինչպես նաև Գեղամ Ամիրաղյանի և համատեղ սեփականատեր Գայանե Հարությունյանի կողմից հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Կարեն Աբազյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:
2. Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով՝ ձեռնարկել միջոցներ սույն որոշման 1-ին կետում նշված խախտումները կասեցնելու ու վերացնելու համար և ընթացքի վերաբերյալ 15-օրյա պարբերականությամբ ներկայացնել տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

X